

ԽՏԱՑՄԱՆ ԴՐՍԵԿՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՆԴԵՄ ԲԱՅԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՅԵՐԵՆԻՑ ԱՆՂԼԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Հայտնի է, որ որոշ լեզուներ, իրենց ներքին օրինաչափություններից և լեզվական առանձնահատկություններից ելնելով, հակված են համառոտության՝ սեղմ արտահայտման եղանակին: Ուրիշ լեզուներ, ընդհակառակը, նախընտրում են ծավալուն արտահայտումը: Բազմիցս նշվել է, որ յուրաքանչյուր հայերեն թարգմանություն իր ծավալով գերազանցում է բնագրին: Այդ պատճառով էլ սեղմ արտահայտման խնդիրն անխուսափելիորեն առաջ է գալիս թարգմանության ժամանակ, ինչպես անգլերենից հայերեն, այնպես էլ հակառակը: Սակայն խնդիրն այն է, որ, ելնելով լեզվական առանձնահատկություններից, անգլերենն, ի համեմատություն հայերենի, ավելի է հակված սեղմ արտահայտման եղանակին: Անգլերենում խտացումը վառ արտահայտված է լեզվական տարբեր մակարդակներում, հատկապես քերականական, բառակազմական և բառային: Այսպիսով, խտացումը կարելի է համարել անգլերենին հատուկ արտահայտման ձև, որը հատկապես ակնհայտ է դառնում երկու լեզուների համեմատության ժամանակ:

Սեր ուշադրության առարկան են մասնավորապես խտացման դրսևորումները, անդեմ բայական կառույցները և նրանց հայերեն փոխարինման հնարավորությունները:

Ինչպես հայտնի է, անգլերենի քերականական կառուցվածքում կարևոր դեր ունեն բայի անդեմ ձևերը՝ անորոշ և ածական դերբայները և գերունդիումը: Ավելի ստույգ՝ այն քերականական կառույցները, որոնք կազմվում են այս դերբայներով և չունեն իրենց նույնաթեքները հայերենում /կամ ռուսերենում/, ինչպես օրինակ, եռանդամ բայական կառույցները՝ խնդրային և ենթակայական դերբայական կառույցները, ուղղական հոլովով դերբայական և նախդրավոր անկախ դերբայական կառույցները, ածական և անորոշ դերբայների որոշ գործառույթներ, անորոշ դերբայը for-phrase-ով, ուղղական և հայցական հոլովներով և անորոշ դերբայով կազմված եռանդամ բայական կառույցները, ինչպես նաև գերունդիումի կառույցները:

Դերբայական մի շարք կառույցներ նպաստում են նախադասության պարզեցմանը: Օրինակ, հայերենի երկրորդական նախադասությունը կարող է փոխարինվել անգլերենի ածական 1 դերբայով, որը կատարում է որոշչի պաշտոն:

Նա հիանում էր աստղերով, որոնք շողում էին երկնքում:

He admired the stars twinkling in the sky.

Այս դեպքում ածական դերբայը հետադաս է, մտնում է որոշիչ դերբայական դարձվածի կազմի մեջ, որը համարժեք է որոշիչ երկրորդական նախադասությանը, և որի ստորոգյալն արտահայտված է դիմավոր բայով: Սա հատկապես բնորոշ է հրապարակախոսական ոճին: Սակայն, հարկ է նշել, որ տվյալ դեպքում հայերենի որոշիչ երկրորդական նախադասության փոխարեն որոշիչ պաշտոնում կարող է կիրառվել ենթակայական դերբայ, որը խտացնում է հայերեն նախադասության կառուցվածքը:

Նա հիանում էր աստղերով, որոնք շողում էին երկնքում:

Նա հիանում էր երկնքում շողացող աստղերով:

Սեկ այլ օրինակ *Սոաքին քարտուղարն ընդժոճեց, որ 744-ն պատրաստ է դաշինք կազմել բոլոր քաղաքական կազմակերպությունների հետ, որոնք ղեկ են 7այաստանի ռազմավարական օբյեկտների սեփականաշնորհմանը:*

The leader of the Armenian Communists emphasized, that the party is ready to form an alliance with all political organizations opposing privatization of Armenia's strategic facilities.

Սակայն միշտ չէ, որ հայերենի երկրորդական անգլերենում փոխարինվում է դերբայական կառույցով: Հայերենի հրապարակախոսական ոճին հատուկ է դերբայական դարձվածների հաճախակի կիրառությունը: Այսպես, օրինակ, հայերենի հետադաս որոշիչ դերբայական դարձվածը անգլերենում կարող է փոխարինվել ածական 1 դերբայով: Այսպիսով երկու լեզուներն էլ նման դեպքերում դերբայների կիրառությունը գերադասում են երկրորդական նախադասությանը: Օրինակ. *Ինչպես »Նոյան տապանին«¹ հայտնում են 77 նախագահի մամլո գրասենյակից, Ռոբերտ Քոչարյանն անդրադարձել է երկրի տնտեսական քաղաքականությանը, մակրոտնտեսական ցուցանիշներին, միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցությանը՝ այն գնահատելով արդյունավետ:*

The presidential press-service told Noyan Tapan that Kocharian spoke about the economic policy of Armenia, the macroeconomic indices and cooperation with international financial organizations, assessing the latter to be effective.

Անգլերենի ածական 2 դերբայը նույնպես կարող է կիրառվել հայերենի երկրորդական նախադասության փոխարեն՝ խտացնելով խոսքը: *Այսօր տեղի կունենա նախագահների առանձնագրույցը, որին կհաջորդեն երկու երկրների պատվիրակությունների բարձր մակարդակի բանակցությունները:*¹

¹ Օրինակները վերցված են PanArmenian Network և Նոյան Տապան ինտերնետային էջերից (www.panarmenian.net/news, www.noyan-tapan.am/):

Today the two leaders will have a private meeting, followed by talks between the delegations of the two countries at the high level.

Հետաքրքիր է ածական 2 դերայի դրսևորումը որպես անգլերենի նախադասության բարդ խնդրի /Complex Object/ մաս: Նման դեպքերում հայերենում անգլերենի բարդ խնդիրը կարող է փոխարինվել ինչպես դերբայական դարձվածով, այնպես էլ երկրորդական նախադասությամբ: Ընդհանրապես, հարկ է նշել, որ անգլերենին հատուկ բայական կառույցների թարգմանությունը յուրահատուկ մոտեցում է պահանջում: Բանն այն է, որ անգլերենին հատուկ որոշակի դերբայական կառույցներ հայերեն թարգմանության ժամանակ հիմնականում պահանջում են երկրորդական նախադասության կիրառություն: Սակայն բացառված չեն հայերենում դերբայական կառույցների կիրառման դեպքերը:

Ածական դերբայով կազմվող բայական կառույցներն անգլերենում լինում են.
ա/ խնդրային դերբայական կառույց (The Objective Participial Construction)
բ/ ենթակայական դերբայական կառույց (The Subjective Participial Construction)

գ/ ուղղական հոլովով դերբայական կառույց (The Nominative Absolute Participial Construction)

դ/ նախդրավոր անկախ դերբայական կառույց (The Prepositional Absolute Participial Construction).²

Խնդրային դերբայական կառույցն անգլերեն նախադասության մեջ հիմնականում կատարում է բարդ խնդրի /Complex Object/ պաշտոն: Հայերենում կամ ռուսերենում նրան համապատասխանում է խնդրի երկրորդական նախադասություն:

Օրինակ.

Կառավարությունը ցանկանում է, որ տնտեսական բարեփոխումներն իրականանան կարճ ժամանակամիջոցում:

The government wants the economic reforms completed in a very short period of time.

Բերված օրինակում տեսնում ենք, որ հայերենի ուղիղ խնդրի երկրորդական նախադասությունն անգլերենում փոխարինվում է խնդրային դերբայական կառույցով: Հարկ է նշել, որ անգլերենի ոչ միայն խնդրային դերբայական կառույցներն են հայերենում փոխակերպվում երկրորդական նախադասությունների: Միևնույն երևույթը դիտարկվում է նաև ենթակայական դերբայական կառույցների դեպքում, ինչպես նաև անկախ ինչպես դերբայական, այնպես էլ ոչ դերբայական կառույցների դեպքում:

² В.Л. Кауиньянская. Грамматика английского языка. Под ред. проф. Б.А. Ильинич. Ленинград, 1963.

հատացումն այս դեպքերում տեղի է ունենում հայերենից անգլերեն կատարվող թարգմանության ժամանակ, սակայն, եթե դիտարկենք հակառակ թարգմանության դեպքեր, ապա պարզ կդառնա, որ անգլերենից հայերեն կատարվող թարգմանության ժամանակ առկա է ճիշտ հակառակ երևույթը՝ ընդարձակումը, բայց միայն այն դեպքում, եթե հայերենում չկա անգլերենում կիրառված համապատասխան կառույցին նույնարժեք կառույց: Այսինքն, հայերենը հակված է ընդարձակվելու՝ անգլերենին հատուկ դերբայական կառույցով կարճ արտահայտման միջոցը փոխարինելով, տվյալ դեպքում հայերենին հատուկ, երկրորդական նախադասությամբ: Այս երևույթը ռուս թարգմանական գրականության մեջ անվանվել է *“декомпрессия”*, այսինքն *ընդարձակում*։³ Օրինակ.

Arafat has said he wants to be buried in Jerusalem while Israel wants him buried in Gaza.

Արաֆատը ցանկություն է ունեցել թաղվելու Երուսաղեմում, մինչդեռ Իսրայելն ուզում է, որ նա թաղվի Գազայում:

Այս օրինակում անգլերենի Complex Object-ով արտահայտված խնդրային դերբայական կառույցը հայերենում փոխարինվել է ուղիղ խնդիր երկրորդական նախադասությամբ: Դիտարկենք մեկ այլ օրինակ.

American warplanes and helicopters were heard roaming overhead.

Պարզ լսվում էր, որ վերևում հոնդյունով պտտվում էին ամերիկյան ռազմական օդանավերն ու ուղղաթիռները:

Օրինակը ցույց է տալիս, որ անգլերենից հայերեն թարգմանությունը պահանջեց կառուցվածքի ընդարձակում, քանի որ անգլերենի *ենթակայական դերբայական կառույցը* հայերենում չունի իր համարժեքը, այդ պատճառով էլ հայերենում դրա փոխարեն կիրառվել է ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն: Հայերենի գլխավոր նախադասությունը տվյալ դեպքում անենթակա միակազմ նախադասություն է՝ արտահայտված ներգործական սեռի *«լսել»* բայից կազմված *«լսվում էր»* կրավորական դիմավոր ձևով:

Վերադառնալով բայական կառույցներին՝ հարկ է նշել, որ անգլերենին հատուկ է այնպիսի կառույցների կիրառությունը, ինչպիսիք են ուղղական հոլովով դերբայական և ոչ դերբայական կառույցները, ինչպես նաև նախդրավոր անկախ դերբայական և ոչ դերբայական կառույցները (*The Nominative Absolute Participial Construction, The Nominative Absolute Construction, The Prepositional Absolute Participial Construction, The Prepositional Absolute Construction*), որոնք չունեն իրենց համարժեքները հայերենում: Դիտարկենք մեկ օրինակ.

Հանդիման առաշտոնական առաոողության ամարտից հետո տեղի է ունեցել երկու նախագահների առանձնագրույցը, որի ընթացքում քննարկվել են հայ-

³ Т.Р. Леникая, А.М. Фигерман Тесты на персонализации. №16. Вопросы практики перевода. Компрессия и Английском языке и ее переводы и перевода. Москва, 1984.

բուլղարական հարաբերություններին, փոխհամագործակցության հեռանկարներին վերաբերվող հարցեր, կարծիքներ են փոխանակվել տարածաշրջանային և միջազգային մի շարք խնդիրների շուրջ:

The formal welcoming ceremony completed, the two Presidents had a tute-tute meeting, during which they discussed the Armenian – Bulgarian relations, prospects of cooperation and exchanged opinions on a number of regional and international issues.

Ինչպես տեսնում ենք, հայերենում ժամանակի պարագայի արտահայտման հիմնական միջոցներից են գոյականի հոլովածները⁴: Տվյալ դեպքում ունենք բացառական հոլովով և *հետո* կապով արտահայտված ժամանակի պարագա, որն անգլերենում փոխարինվել է ուղղական հոլովով դերբայական կառույցով՝ դրանով իսկ խտացնելով հաղորդակցությունը:

Ուղղական հոլովով նախդրավոր դերբայական կառույցի օրինակ.

Զինված պայքարն արդեն սկսվել է, արտոհաճանախան ազատագրական խմբավորումները ռազմական գործողություններ են մղում գաղութային կառավարության դեմ ողջ տարածաշրջանում:

The battle, in fact, has already been joined, with guerilla armies of liberation waging armed struggle against the colonial rulers in all parts of the region.

Հայերենի դիմավոր բայով ընդարձակ նախադասությունը փոխարինվել է անգլերենի նախդրավոր անկախ դերբայական կառույցով:

Այսպիսով, ինչպես տեսանք, անգլերենին հատուկ ածական դերբայների և դերբայական կառույցների կիրառությունը այս լեզվի համար խտացման լայն հնարավորություններ է տալիս: Ակնհայտ է նաև, որ թեպետ հայերենին նույնպես հատուկ է դերբայական դարձվածների կիրառությունը, սակայն անգլերենն այդ կառույցների միջոցով հանգում է խտացման, մինչդեռ հայերենում անգլերենին հատուկ ածական դերբայական կառույցների փոխարեն հիմնականում կիրառվում են երկրորդական նախադասություններ, ինչը պայմանավորված է հայերենում համապատասխան նույնարժեքների բացակայությամբ:

Ինչպես ածական դերբայների, այնպես էլ անորոշ դերբայի կիրառությունն անգլերենում լայն հնարավորություն է ստեղծում խտացման համար հայերենից անգլերեն կատարվող թարգմանության ժամանակ: Այս առումով հետաքրքիր են անգլերենի անորոշ դերբայի մի քանի շարահյուսական գործառույթներ, ինչպես, օրինակ՝ նպատակի, պատճառի և հետևանքի պարագաները, ուղիղ խնդիրը: Օրինակ.

⁴ Ս.Գ. Աբրահամյան: Հայոց Լեզու: Շարահյուսություն: «Լույս» հրատ., Երևան, 1975. Յ. Հ. խղիթյան: «Հայոց Լեզու 7» Երևան, 1999

Այս մեթոդն այնքան էլ բավարար չէ, որպեսզի հանգեցնի որոշակի արդյունքների:

This method is not accurate enough to produce any definite results.

Հայերենի պատճառի պարագա երկրորդական նախադասությունն անգլերենում փոխարինվել է անորոշ դերբայով, որն անգլերեն նախադասության մեջ արտահայտում է պատճառ հետևանքային հարաբերությունը (the adverbial modifier of result): Սովորաբար անգլերենում այդ գործառնությունը անորոշ դերբայը հաջորդում է *too, enough, sufficiently* մակբայներին և նրանցով բնութագրվող ածականներին: Հայերենում պատճառի պարագա երկրորդական նախադասությունն ամբողջապես արտահայտում է հետևանքային հարաբերություն գլխավորի հետ և կապակցված է *որպեսզի* շաղկապով: Եթե դիտարկենք հակառակ թարգմանությունը, ապա հնարավոր է նաև հայերենի նախադասության խտացումն ապակատար դերբայի և *համար* կապի միջոցով:

Այն մեթոդը որոշակի արդյունքների հանգեցնելու համար այնքան էլ բավարար չէ:

Դիտարկենք այլ օրինակ.

Համոզված ենք, որ Միջազգային Դատարանը նոր հնարավորություն է ընձեռում միջազգային պահանջ ներկայացնել Իսրայելին, ոռանդի նա անդամակցի «Միջուկային զենքի տարածման դեմ» պայմանագրին և իր միջուկային պաշարները հանձնի Միջուկային էներգիայի միջազգային կազմակերպությանը:

We believe the International Court of Justice provides another opportunity to register the international demand from Israel to accede to the NPT and put its nuclear facilities under the IAEA safeguards system

Անգլերենի անորոշ դերբայով արտահայտված ուղիղ խնդիրը հայերենում արտահայտված է նպատակի պարագա երկրորդական նախադասությամբ՝ պահանջելով բնագրի կառուցվածքի ընդարձակում:

Անգլերենին հատուկ են նաև անորոշ դերբայով կազմված մի շարք կառույցներ, որոնց նույնաթմբները բացակայում են հայերենում, այդ իսկ պատճառով նման կառույցների հայերեն թարգմանությունը պահանջում է նախադասության կառույցի ընդարձակում, մինչդեռ անորոշ դերբայի կառույցների կիրառումն անգլերենում ապահովում է նախադասության կառույցի խտացում:

Անգլերենում լայնորեն կիրառվում է «առարկայական հիվովն անորոշ դերբայով» կառույցը (Objective-with-the-Infinite Construction), որը նախադասության մեջ կատարում է բարդ խնդրի /Complex Object/ դեր:

Օրինակ.

Մենք ընդունում ենք, որ այս երևույթներն ուսումնասիրված են:

We consider these phenomena to have been investigated.

Հայերենի ուղիղ խնդրի երկրորդական նախադասություններն անգլերենում հաճախ փոխարինվում են բարդ խնդրով /Complex Object/: Հայերենի երկրոր-

դական նախադասության ստորոգյալն անգլերեն նախադասության մեջ արտահայտվում է անորոշ դերբայով, իսկ ենթական դառնում է ուղիղ խնդիր:

Դիտարկենք հակառակ թարգմանության դեպք.

The major powers expect the talks to take place at the end of the next month.

Գերագույն ուժերն ակնկալում են, որ բանակցությունները կկայանան հաջորդ ամսվա վերջին:

Ակնհայտ է, որ հայերենում անգլերենի համապատասխան կառույցի բացակայության պատճառով անորոշ դերբայը փոխարինվել է երկրորդական նախադասությամբ: Հարկ է նշել, որ անգլերենի *to expect, to hope* բայերին հաջորդող անորոշ դերբայը հայերենում թարգմանվում է ապառնի ժամանակով դրված դիմավոր բայով:

Հայերենում լայնորեն կիրառելի անորոշ-դիմավոր նախադասությունները սովորաբար անգլերենում փոխարինվում են լեզվին հատուկ »ուղղական հոլովով և անորոշ դերբայով«¹ կառույցով, որտեղ այն կատարում է բարդ ենթակայի (Complex Subject-ի) դեր: Օրինակ.

Ինչպես հայտնում են, պատվիրակությունը մեկնել է Փարիզ:

The delegation is reported to have left for Paris:

Հայերենի անորոշ-դիմավոր նախադասությունն անգլերենում փոխարինվել է ուղղական հոլովով և անորոշ դերբայով կառույցով: Դա հատկապես կիրառական է հրապարակախոսական ոճում: Այն պայմանավորված է մի քանի պատճառներով: Առաջին հերթին այն թույլ է տալիս խուսափել տեղեկատվության ստույգ չլինելու պատասխանատվությունից: Երկրորդ հերթին, ի շնորհիվ սեղմ կառուցվածքի, այն խտացնում է հաղորդակցությունը, ինչով և պայմանավորված է այս կառույցի լայն կիրառությունն անգլերենում:

Ինչպես հայտնում են, երեսունից ավելի ավտոմեքենաներ ավելի քան տասներկու ժամ ծանապարհին են մնացել ձնակույտերի պատճառով:

More than thirty cars are said to have been stranded twelve hours in snow drifts.

Հայերենում նախադասության կառույցի ընդարձակում են պահանջում մասնաշաղկապի հոլովով և անորոշ դերբայով եռանդամ կառույցները (Accusative with the Infinitive): Անգլերենում նրանք շատ լայն կիրառություն ունեն, իրենց սեղմ կառուցվածքի հետևանքով այդ լեզվին հատուկ խտացման ևս մեկ հնարավորություն են ստեղծում՝ հայերենում սովորաբար փոխարինվելով երկրորդական նախադասությամբ: Օրինակ.

Bulgarians would much prefer the West to buy some of the more recent manifestations of their national achievement: they want to export more machine tools, canned food, and wine.

Բուլղարիան կնխընտրեր, որ արևմտյան երկրները ներմուծեին վերջին ժամանակների իրենց լավագույն արտադրանքը՝ հաստոցներ, պահածոներ և գինի:

Անգլերենին հատկանշական են մասնաբաժնի կոչված for-phrase-ով կառույցները: Նրանք նույնպես խտացնում են նախադասությունը և թարգմանության մեջ սովորաբար փոխարինվում են երկրորդական նախադասություններով: Երկրորդական նախադասության բնույթը, սակայն, կախված է անգլերենի նախադասության մեջ այդ կառույցի կատարած պաշտոնից: Ամենից հաճախ դա պարագայի պաշտոն է և թարգմանության մեջ փոխարինվում է *որ, որպեսզի, այն նպատակով, որ, նրա համար, որ* կապերով և կապական արտահայտություններով: Օրինակ.

For the results to be reliable you must have them tested again and again.

Որպեսզի արդյունքները հուսալի լինեն, դուք պետք է պարբերաբար ստուգեք դրանք:

Ածական և անորոշ դերբայների պես, գերունդիումի կիրառությունը նույնպես լայնորեն տարածված է անգլերենում: Գերունդիումը, լինելով բայի անդեմ ձև, բնութագրվում է ինչպես բայի, այնպես էլ գոյականի հատկանիշներով և միշտ արտահայտում է գործողության ընթացքայնությունը: Հայերենում համապատասխան ձևը բացակայում է: Անգլերեն թարգմանության մեջ գերունդիումով կարող են փոխարինվել ինչպես դերբայներն ու դերբայական դարձվածները, այնպես էլ երկրորդական նախադասությունները, ինչը, բնականաբար, խտացնում է նախադասությունը: Օրինակ.

Ելույթ ունենալով Ազգային Անվտանգության հորիզոնի նիստում՝ Կուլման քննադատել է ընդդիմության կողմնակիցների կողմից կատավարական շենքերի շրջափակումը՝ դա անվանելով «օրենքի ոտնահարում»:

Kuchma, speaking at a National Security Council meeting, criticized the blockades of government buildings as a "gross violation of the law."

Հայերենի անորոշի գործիական հոլովով դերբայական դարձվածն անգլերենում փոխարինվել է գերունդիումով:

Շնորհակալ եմ, որ եկար:

Thank you for coming.

Պատճառի պարագա երկրորդական նախադասությունը փոխարինվել է գերունդիումով:

Հայերենում կա մաս «Շնորհակալ եմ գալուդ համար» ձևը:

Ես չեմ սիրում, երբ ինձ զննում են:

I am not fond of being stared at.

Ուղիղ խնդրի երկրորդականն անգլերենում փոխարինվել է կրավորական գերունդիումով:

Գերունդիումը կարող է հանդես գալ նաև բարդ կառույցներում, որոնք հայերենում փոխարինվում են տարբեր տիպի երկրորդական նախադասություններով, ինչպես նաև բայի մյուս անդեմ ձևերով՝ համաձայն անգլերենում գերունդիումի կառույցի շարահյուսական պաշտոնի անգլերեն նախադասությունում: Հայերենից անգլերեն թարգմանության ժամանակ գերունդիումի կառույցների կիրառությունը խտացնում է խոսքը: Օրինակ.

Ես լսել եմ, որ կամուրջն արդեն կառուցել են:

I heard of the bridge having been built.

Ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունը փոխարինվել է կրավորական գերունդիումի կառույցով, որը նույնպես կատարում է խնդրի պաշտոն:

ՆԱՏՕ-ին երկրի անդամակցելը կերաշխավորի անվտանգություն և կայունություն տարածաշրջանում:

The country's joining NATO will guarantee security and stability in the region.

Այս օրինակում հայերենի անորոշ դերբայով արտահայտված ենթակա դերբայական դարձվածն անգլերենում արտահայտվել է գերունդիումի կառույցով՝ պահպանելով իր շարահյուսական պաշտոնը նախադասության մեջ:

Այսպիսով, տեսնում ենք, որ և անգլերենը, և հայերենը լայնորեն կիրառում են դերբայներ: Ակնհայտ է նաև, որ և անգլերենում, և հայերենում դերբայների կիրառությունն ապահովում է սեղմ արտահայտումը՝ հաղորդակցության խտացումը: Սակայն, դիտարկելով երկու լեզուներին հատուկ բայի անդեմ ձևերի կիրառության հնարավորությունները, գալիս ենք եզրակացության, որ խտացումը հանդիսանում է անգլերենի ներքին լեզվական մղում: Հայերենին, չնայած բայի անդեմ ձևերի լայն կիրառությանը, ավելի բնորոշ է ընդարձակ արտահայտման ձևը:

Խտացումն, այսպիսով, դիտարկվում է որպես անգլերենին բնորոշ երևույթ, որը գործում է լեզվական բոլոր մակարդակներում:

Բացի նրանից, որ խտացումը լեզվական արտահայտման ձև է, այն կարող է դիտարկվել նաև որպես ոճական տարբերակիչ հատկանիշ, որը հատկապես բնութագրական է հրապարակախոսական ոճին: Այն պետք է հաշվի առնել մասնավորապես բայի անդեմ ձևերի՝ անորոշ և ածական դերբայների, ինչպես նաև գերունդիումի և նրանց կառույցների թարգմանության ժամանակ:

Թվում է, թե խտացման տարբեր ուղղությունների բացահայտումն ավելի մեծ կարևորություն ունի հատկապես անգլերենից հայերեն կատարվող թարգմանության համար, քանի որ հայերենին բնորոշ է ընդարձակման ավելի բարձր աստիճանը թարգմանության ընթացքում: Այս դեպքում խնդրի լուծումը պետք է փնտրել լեզվական հավելորդայնության մակարդակի վրա: Ինչ վերաբերվում է հայերենից անգլերեն թարգմանության պարագայում առաջ եկող խտացմանը, ապա գործնական թարգմանությունը ցույց է տալիս, որ այն անհրաժեշտ գործոն է լեզվի ոճական նույնականության ապահովման համար: